ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, Հրապարակ 1, Հեռ.
0245 2-14-82 , ashotsq.hamaynq@mail.ru

13 դեկտեմբերի 2024թ.
N 1648

«Մ. Է. Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագրի միակողմանի մասնակի լուծելու մասին

Հարգելի տիկին Գրիգորյան

ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի և «Մ. Է. Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի օգոստոսի 30-ին կնքվել է ԱՀ-ԳՀԾՁԲ-24/49-2 ծածկագրով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ Պայմանագիր), որի շրջանակում Ձեր ընկերությունը 30 օրացուցային օրվա ընթացքում պետք է մատուցեր ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կրասար, Սիզավետ, Սարագյուղ, Հարթաշեն, Գոգհովիտ, Բաշգյուղ և Մուսայելյան բնակավայրի տուֆ քարով սալարկման, ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կրասար, Սիզավետ, Սարագյուղ, Հարթաշեն, Գոգհովիտ, Բաշգյուղ և Մուսայելյան բնակավայրի տուֆ քարով սալարկման և ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ցողամարգ, Կարմրավան և Զույգաղբյուր բնակավայրերում բնական գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման

ծառայությունները, մինչ օրս մատուցվել է ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կրասար, Սիզավետ, Սարագյուղ, Հարթաշեն, Գոգհովիտ, Բաշգյուղ և Մուսայելյան բնակավայրի տուֆ քարով սալարկման, ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կրասար, Սիզավետ, Սարագյուղ, Հարթաշեն, Գոգհովիտ, Բաշգյուղ և Մուսայելյան բնակավայրի տուֆ քարով սալարկման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունները, իսկ ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ցողամարգ, Կարմրավան և Զույգաղբյուր բնակավայրերում բնական գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցումը ոչ պատշաճ է կատարվել:

Ուստի առաջնորդվելով վերը նշված պայմանագրի 7.11 կետի ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանը մասնակի միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ Մ. Է. Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5(հինգ) բանկային օրվա ընթացքում Աշոցք համայնքի գանձապետական 900195021231 հաշվեհամարին փոխանցել 300000(երեք հարյուր հազար) ՀՀ դրամ սահմանված որակավորման ապահովման 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) և պայմանագրի ապահովման 120000(մեկ հարյուր քսան հազար): Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «Մ. Է. Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին:

Համայնքի ղեկավար Կ. Մանուկյան